

ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՐԳՈ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԲԿԵՆ Ե. ՍԱՐԿԻՍՈՎԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ» ՇՔԱՆՇԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ
(27 սեպտեմբեր 1978 թ.)

Ձերդ Սրբություն, մեծարգո Կաթողիկոս Ամենայն Հայոց,

Հարգելի հյուրեր, հարգելի ընկերներ,

Այսօր այստեղ՝ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գերագույն սովետի նախագահության նստավայրում տեղի ունեցավ մի նշանավոր ակտ:

Ես պատիվ ունեցա Սովետական Միության Գերագույն սովետի նախագահության հանձնարարությամբ և Նրա անունից Ձեզ, մեծապատիվ Վեհափառ, հանձնելու մեր մեծ հայրենիքի պետական բարձր պարգևը:

Ձեր հայրենասիրական, հայրենանվեր գործունեությունը, աշխարհի ժողովուրդների խաղաղությանն ուղղված Ձեր ջանքերը մեծ ու լայն ճանաչում են գտել մեր հանրապետությունում, սովետական ողջ երկրում, ինչպես նաև նրա սահմաններից դուրս, նրա սահմաններից շատ ու շատ հեռու:

Միջազգային ներկա բարդ իրադրության պայմաններում ամեն մի քայլ, որն ուղղված է ժողովուրդների բարեկամության և խաղաղության ամրապնդմանը, մարդկանց բարօրությանը, գնահատվում է ժողովրդի կողմից ըստ արժանվույն:

Եվ ահա, Սովետական պետության այս մեծ պարգևը, Ձեզ հանձնած «Ժողովուրդների բարեկամության» շքանշանը, Ձեր այդ գործունեության արգասիքն է:

Հայ ժողովուրդը ամենուր մեծ գոհունակությամբ ընդունեց Ձեր պարգևատրումը Սովետական պետության կողմից, ուրախությամբ ընդունեց հրամանագիրը, որը ստորագրել է ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ, հայ ժողովրդի լավագույն բարեկամ ընկեր Լեոնիդ Իլյիչ Բրեժնևը:

Թույլ տվեք, Ձերդ Սրբություն, Սովետական Միության Գերագույն սովետի նախագահության անունից, հանրապետության ղեկավարության անունից և անձամբ իմ կողմից ջերմորեն շնորհավորել Ձեզ այս բարձր պարգևի համար և ցանկալ Ձեզ քաջառողջություն, հետագա հաջողություններ Ձեր հայրենանվեր գործունեության մեջ: